



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

29 սեպտեմբերի 2011թ. թիվ 453

Ռ.ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 159 հոդվածների, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով Ռ.Զիլինգարյանի դիմումը՝

Կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ էՄ.

1. «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի տնօրեն Ռոբերտ Զիլինգարյանին տրամադրել 2011 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդը ա/թ հոկտեմբերի 10-ից մինչև նոյեմբերի 4-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

2. Ռ.Զիլինգարյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի բժիշկ Ն.Էվինյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2011թ. սեպտեմբերի 29
ք.Վանաձոր